ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/8584/02/24 ք. Երևան
17 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<Աննարկա>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՀՄ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի լուծումը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի միջև 25.06.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ-3 պայմանագիրը 13.09.2024թ.-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից միակողմանի և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի ռեկտորի 20.09.2024թ.-ի թիվ 09/1346

որոշումը:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 13.10.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/8584/02/24 քաղաքացիական գործը, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **14.10.2024 թվականին**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՀՄ-ից պետք է պահանջել <<ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **Էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<Աննարկա>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՀՄ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՀՄ-ից պահանջել դատարան ներկայացնել <<ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **Էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՀՄ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am